

ՀՏԴ՝ 398.7

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՐՊԵՍ ՔՆԱՍՈՒՏԻ ՏԵՔՍԵՐ

Հասմիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

*Կարծում են՝ հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը,
դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունենալ,
պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ,
գեղեցիկ ու անպայման ճաշակով պիտի հրատարակել:*

Հովհ. Թումանյան

Բանալի բառեր՝ օրորոցային, հեքիաթ, հեղինակ, բանասաց, հասցեատեր, բանահյուսություն, պատում, օրորոց, տեքստ միջավայր:

Աշխատանքում արժևորվում են Հովհ. Թումանյանի մանկական ստեղծագործությունները՝ դիտարկվելով բանահյուսական մշակույթի համատեքստում: Թումանյանի մանկական ստեղծագործությունները մեծ դերակատարում ունեն հայ մանկանոցում: Մեր կատարած բանահավաքչական աշխատանքները վկայում են, որ Թումանյանի մանկական երկերը հնչում են տարբեր տարիքային խմբերի բանասացների շուրթերից:

Նախաբան. Հովհաննես Թումանյանը՝ որպես բանահյուսական մտածողության կրող և փոխանցող, ունի մանուկներին հասցեագրված տեքստերի բացառիկ ընտրանի, որը բանահյուսահեն է: Մեզ հուզող խնդրի տեսանկյունից նշում ենք այն տեքստերը, որոնք նախաքնային են, քնաբեր կամ քնամուտ: Ըստ էության, օրորոցայինի, հեքիաթի տեքստերը կարելի է բնորոշել որպես քնամուտի տեքստեր: Քնամուտի տեքստերն ունեն բացառիկ դերակատարում մանկաշխարհում և առատ բաշխվածություն թե՛ հեղինակային, թե՛ բանահյուսական ստեղծագործություններում:

Թումանյանի՝ որպես մանկագրի, ուսանելի ավանդույթներից մեկը ժողովրդական բանահյուսության հետ մշտական սերտ կապն է: Հանճարեղ բանաստեղծի կախարդական գրչին հարուստ նյութ են տվել բուն ժողովուրդը, ժողովրդական երգերը, լեգենդները, գրույցները, հեքիաթները, առակները, որոնք

մեծ վարպետությամբ մշակել է նա ու վերադարձրել հարազատ ժողովրդին. «Որքա՛ն, որքա՛ն մեծ բան է, եթե գրողը կարողանա ուսումնասիրել իր ժողովրդին, ուսումնասիրել նրա ավանդույթները, լեզուն, աղաթները, -գրում է Թումանյանը»:¹

Մեզ հուզող խնդրի տեսանկյունից առանձնանշում ենք այն տեքստերը, որոնք նախաքնային են, քնաբեր կամ քնամուտ: Քնամուտի տեքստերն ունեն ինքնատիպ դերակատարում թումանյանական աշխարհում:

Յուրաքանչյուր բանասաց նորովի և յուրովի է ներկայացնում Թումանյանի մանկական ստեղծագործություններն ու դրանց լեզվական պատկերը:

Հարկ է նշել այն իրողությունը, որ կայուն միջավայրում է ձևավորվում, «արտադրվում» թումանյանական նյութը՝

1. վերարտադրողների խումբ,
2. ընդունողների խումբ:

Առաջին խմբում են ավագ օրոքասացները, հեքիաթասացները, որոնք երեխայի քնի միջավայրը ձևավորում են Թումանյանի հեքիաթների կերպարների «բնակեցմամբ»: Այդ կերպարները մարդանում են, անձնավորվում և տեղափոխվում մանկաշխարհ, մասնավորապես՝ քնաշխարհ: Այս առիթով մեջբերենք հեքիաթասաց Արեգնազան Մխիթարյանի խոսքը. «Երեխաներիս փոքրուց կարդացել եմ Թումանյանի հեքիաթները. Թումանյանի լեզուն ժողովրդական է, երեխաների համար հասանելի, մատչելի, հանգավորումով և բովանդակությամբ լեցուն»²: Բանասացը ասացողական վարպետությամբ փոխանցում է մեզ իր հիշողությունները երեխաներին քնեցնելու, մանկասենյակում թումանյանական շունչ ապահովելու մասին. «Ժողովրդի բնաստեղծի՝ Թումանյանի ասելիքը լավ փոխանցելու համար երեխաներիս հետ կենդանի բեմականացում /բեմական դիմակներով, մորթե գլխարկով/ էի կազմակերպում հեքիաթների կերպարների «ներկայությամբ»: Բեմադրության միջոցով երեխաների հուզաշխարհում ավելի կտպավորվեք Թումանյանը»:

Ընդունողների խմբում են այն երեխաները, որոնց հասցեագրվում են Թումանյանի ստեղծագործությունները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թումանյանի մանկագրության յուրաքանչյուր նմուշ կարող է դառնալ մանկաշխարհի անբաժան ուղեկիցը: Տեղին է մեջբերել մեծ մանկագրի հետևյալ դիտարկումը. «Ես ինքս գրող եմ, մանկական գրվածքներ գրելիս երբեք չեմ մտածում, թե քանի տարեկանի հա-

¹ Մելքունյան Մ.Ս., Հովհաննես Թումանյանը կրթության ու դաստիարակության մասին, Եր., Լույս հրատ., 1969, էջ 119:

² Արեգնազան Մխիթարյան. Բանասաց: Ծնվել է 1952թ. Գյումրիում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Պարսկահայաստանից (Հ. Մատիկյանի գրառումներից):

մար է նա: Քանի տարեկան ուզում է թող կարդա, ինչ հասակի համար կլինի, թող նրան տան: Բոլոր հասակներին հարմար կլինի-ավելի լավ: Չենք կարող սահմանավորել»³:

Բանասացը ընդգծում է, որ օրորոցի մոտ միշտ երգել է Թումանյանի «Ա՛խ, ինչ լավ են սարի վրա» երգը.

*Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անրջային, թեթևասահ
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:*

Բանասաց Արեգնազանի բանավոր փոխանցմամբ՝ վերոնշյալ երգի բաների ներքո երեխաների առօրյա աշխուժությունը անցնում էր. հանգստանում էին ու քնում:

Լեզվառճական առումով ևս նշված պատատիկը ուշագրավ է: Առոզանական նշանների առկայությունը ինչ-որ չափով ևս ապահովում է հանգստաբեր վիճակ. ստեղծվում է մեղեդային պատկեր:

Օրորասացի փոխանցմամբ՝ վերոնշյալ երգը ապահովում է նաև օրոր երգողի խաղաղաբեր քունը. ինքնաքնաբեր է: Հիշյալ տեքստը որպես օրոր ներկայացնելու, երգելու ուրույն մեկնություն է տալիս բանասացը. «Երգը երգելիս բնության գեղեցկությունները իմ աչքի առաջ էին (*սար, ամպ, հով*), և ես էլ երանությունից աչքերս փակում էի: Մանավանդ ես ապրում էի գյուղում, համեմատում էի իմ գյուղը Լոռվա աշխարհի հետ և երգում էի: Թումանյանին սիրում են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, որովհետև նա խորը հասկանում էր ամեն մի հայ մարդու հոգեվիճակը, նրա ստեղծագործությունների մեջ մարդիկ մխիթարություն էին տեսնում:»:

Թումանյանի մանկական գործերի ստեղծման հիմքում են ժողովրդական խոսքն ու երկխոսությունը. *Ժողովրդական երկխոսության էությունն այն է, որ մարդը սերտորեն կապված է ուրիշ մարդկանց հետ, նրա ամբողջ կյանքը անցնում է համայնքում, որը կարող է գոյություն ունենալ միայն ուժեղ կապերի ու առնչությունների շնորհիվ: ... Ժողովրդական խոսքը միշտ հնչում է յուրայինների շրջանում: Այն հնչում է բացահայտ, բոլորի, շատերի համար, այն միայնություն, առանձնություն չի ընդունում: Այն իսկապես ժողովրդական խոսք է՝*

Խնդրո առարկային առնչվող մեր կատարած բանագիտական աշխատանքը ցույց է տալիս, թե ինչքան տարատեսակ պայմաններ կարող են առա-

³ Մելքունյան Մ.Ս., Հովհաննես Թումանյանը կրթության ու դաստիարակության մասին, Եր., Լույս հրատ., 1969, էջ 92-93:

⁴ Եղիազարյան Ա., Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990, էջ 179:

ջադրվել էր երեխային՝ քնելու դիմաց. «Քնի՛ր, Թումանյանի հեքիաթները կկարդաս» և այլն:

Այս առիթով մեջբերենք բանասաց Կ. Թադևոսյանի խոսքը. «Երբ էրեխեքս փոքր են էղել՝ գրկանոց, երգել են օրորոցային, իսկ երբ արդեն մի փոքր մեծըցել են, սկսել են հեքիաթներ պատմել, հատկապես Թումանյանի հեքիաթները. նրանք ուրիշ համ ու հոտ ունին...»:⁵

Ըստ բանասացի՝ փոքր տարիքում, երբ երեխան շատ է լաց լինում, օրորասացը, բացի օրոր երգելուց, տարբեր միջոցների է դիմում՝ երեխային հանգրտացնելու համար, և այդ ժամանակ երգն է ստեղծվում. շարժումը կարևոր նախադրյալ է երգի ստեղծման համար, իսկ հանգիստ վիճակում պետք է ընթերցել խրատական պատումներ, հատկապես հեքիաթներ:

Քնամուտի տեքստերում գերակա են մանկախնամ, մանկապահպան և քնաբեր կերպարները, որոնք օգնում են հեքիաթասաց/օրորասացին՝ երեխային քնի աշխարհ տեղափոխելու: Թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային նախաքնային տեքստերը հագեցած են ներքոհիշյալ կերպարներով:

Հ. Թումանյանի «Ուլիկը» հեքիաթը անդրադարձ է մանկախնամ կերպարի՝ այծի բարեխնամ գործունեությանը: Ասվածը դիպուկ ներկայացնելու համար մեջբերենք մի պատառիկ վերոնշյալ հեքիաթից.

Սևուկ ուլիկ,

Միրուն բալիկ,

Ման եմ եկել սարեսար,

Կաթն եմ արել քեզ համար,

Դո՛նակը բա՛ց, ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

Միրուն բալիկ⁶:

Հայ օրորոցային տեքստերում ևս հիշատակվում է այծի բարեխնամ, հոգատար դերակատարումը.

Դարի գլուխ ճղոր զարկիմ,

Հարավ քամին տանի-բերի

Վերու էձ գալ քեզ ծիծ տա,

Մեկիկ աստված քեզի պահա,

Հայրուրուրի՛, հայրուրուրի՛:

⁵ Կառողինա Թադևոսյան: Ծնվել է 1954թ. Ջաջուռում: Ունի միջին մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Վանից (Հ. Մատիկյանի գրառումներից):

⁶ Թումանյան Հ., Հեքիաթներ, Եր., 1988, էջ 4:

Մանկանոցում ուշագրավ գործառույթ ունեն նաև փերինները՝ քնաբեր, արթնացնող, հաճախ էլ վախեցնող: Փերինները՝ որպես կերպար, հայտնվում են ինչպես բանահյուսական, այնպես էլ հեղինակային նյութերում: Ավելին, մանկանոցում նրանց «գործունեությունը» ավելի նկատելի է հեղինակային գրական երկերում:

Օրինակ, Վարանդայում մայրերը հավատում են, որ օրորոցագող քաջքեր կան, որոնք գալիս են և տանում երեխաներին⁷: Քաջքերը հաճախ գողանում են մարդկանց երեխաներին, որոնք հետագայում իբրև հովիվներ նրանց հոտերն են արածեցնում: Գողացված այս երեխաներին նրանք պարզում են կերպարանափոխվելու և աներևութանալու կարողություն: Բայց ամենից շատ նրանք սիրում են երեխաներին փոխել: Օրորոցից վերցնում են առողջ և գեղեցիկ երեխաներին, որոնք պաշտպանության ոչ մի միջոցով չեն ապահովված, և նրանց փոխարեն դնում են իրենց հիվանդ ու սգեղ երեխաներին, որոնք սովորաբար չեն ապրում⁸: Հեղինակային ստեղծագործություններում ևս ակնհայտ է ոգիների մանկագող լինելու իրողությունը: Լավագույն օրինակ է Թումանյանի հեղինակային երկից՝ «Օրորոցագող»-ից հետևյալ մեջբերումը.

Կես գիշերին մութ խրճիթում
Մայրը լսեց մի խորոյուն,
Եվ վեր թռավ ահը սրտում,
Նայեց քնած յուր որդուն:
Մի արարած սև ու խավար
Նա նկատեց սրտադող,
Եվ ճանաչեց սարսափահար՝
Օրորոցի մի չար գող,
Որ գավակի բուկը բռնած՝
Խեղդում էր սև ճանկերում,
Եվ երեխան աչքերը բաց
Չարչարվում էր ու հևում:
Եվ մայրական անհուն սերը
Ուժ էր տալիս գերբնական...
Եվ ուժասպառ, հաղթված չարը
Թողեց օրրանը մանկան...⁹

⁷ Լալայան Ե., Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 179:

⁸ Աբեղյան Մ., Երկեր, Է, Եր., 1975, էջ 88:

⁹ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Եր., 1990:

Ստեղծագործությունն արտացոլում է մայրական սիրո ուժգնությունը, գերբնական գորությունը գիշերվա չարքի դեմ:

Նշված ստեղծագործությունը լեզվական առումով ևս հիշարժան է. Օրորոցագող, օրորոցի մի չար գող բառերն ու արտահայտությունները փոխանվանական յուրօրինակ դրևորման միջոցներ են (օրորոց՝ երեխա բառանվան փոխարեն):

Եզրահանգում. Ամփոփելով նշենք, որ Հովհաննես Թումանյանի՝ մանկանց հասցեագրված ստեղծագործությունները՝ որպես քնամուտի տեքստեր, ունեն կիրառական՝ քնաբեր, անդորրաբեր նշանակություն, լրացնում ու հարստացնում են հայ սովորութամշակութային միջավայրը: Ըստ էության, բացի գեղագիտական ու բանաստեղծական արժեքից, այդ երկերը հոգեթերապևտիկ նշանակությամբ հարստացնում են մեծն Թումանյանի մանկագրության բովանդակային շերտերը:

ПРОИЗВЕДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА КАК ПРЕДСОННЫЕ ТЕКСТЫ

Матикян А. Г.

Ключевые слова: *колыбельная, сказка, автор, нарратор, адресат, фольклор, наррация, детская кроватка, среда, текст.*

Ованес Туманян как носитель народного наследия хорошо известен в армянском детском мире. Его знаменитые сказки как особый вид повествования перед сном являются живыми «организмами» в армянских семьях. Сказки рассказываются разными возрастными группами и выполняют разные функции: мирные, дидактические, эстетические - и в то же время в некоторых случаях считаются предсонными.

HOVHANNES TOUMANYAN'S WORKS AS BEDTIME TEXTS

Matikyan H. H.

Key words: *lullaby, fairy tale, author, narrator, addressee, folklore, narration, cradle, environment, text.*

Hovhannes Toumanyan as the bearer and transmitter of folk heritage, is well-known in the Armenian nursery. His famous fairy tales, as specific species of bedtime narration, are living “organisms” in Armenian families. The tales are narrated by different age groups and carry out different functions: peaceful, didactic, aesthetic and at the same time are in some instances considered to be sleep “putters”.

R e f e r e n c e s

1. **Melqumyan M.S.**, Hovhannes Tumanyany krtutyany u dastiarakutyany masin, Yerevan, Luys hrat., 1969 (**In Armenian**).
2. **Yeghiazaryan A.**, Tumanyani poetikan ev nra zhoghovrdakan akunqner, Yerevan, 1990 (**In Armenian**).
3. **Tumanyan H.**, Heqiatner, Yerevan, 1988 (**In Armenian**).
4. **Lalayan Y.**, Yerker, h.2, Yerevan, 1988 (**In Armenian**).
5. **Abeghyan M.**, Yerker. Yerevan, 1975 (**In Armenian**).
6. **Tumanyan H.**, Yerkeri liakatar zhoghovacu, h.2. Yerevan, 1990 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 04.11.2019

Գրախոսվել է՝ 15.11.2019

Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտաշխատող, էլ. փոստ՝ hasvrej@mail.ru